



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ  
ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ՀՅՔԴ1/0081/02/08

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

նախազահուրյամբ՝ դատավոր  
քարտուղարությամբ՝

Լ. Հովհաննիսյանի  
Հ. Դարբինյանի

2017 թվականի հուլիսի 26-ին (ք. Մարալիկ)

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Ֆելիքս Մարգարյանի իրավահաջորդ Լատրա Մարգարյանի(հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1ա շ. բն. 6), Գոռ Պողոսյանի(անձնագիր՝ AB0391693 տրված 24.05.1997 թվականին, 017-ի կողմից, հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճ. 59շ, բն. 4), Վաղինակ Պողոսյանի իրավահաջորդ Արևհատ Պողոսյանի(հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, 116/101 տնակ), Հովսեփ Ազատի Գալոյանի(անձնագիր՝ AE0306627 տրված 27.05.1999 թվականին, 017-ի կողմից, հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճ. 59շ, բն. 1), Անդրանիկ Գալոյանի (անձնագիր՝ AE0514619 տրված 29.03.2000 թվականին, 016-ի կողմից, հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճ. 59շ, բն. 2, այսուհետ նաև՝ Հայցվորներ) ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի(հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ.Նոյնի 16), <<Պրոգրես>> համալսարանի(ՀՎՀՀ՝ 05501843, պետական գրանցման վակայակն թիվ՝ 015192, հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1, այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Հակընդդեմ Հայցվոր), ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի Գյումրու տարածքային ստորաբաժանման, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ներկայումս՝ ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն), ՀՀ քաղաքաշինության նախարարության (ներկայումս՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե)՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ <<Պրոգրես համալսարան>> ԱԿ-ի (այսուհետ նաև՝ Հակընդդեմ հայցվոր) ընդդեմ Ֆելիքս, Լատրա, Աստղիկ, Գուրգեն Մարգարյանների, Գոռ, Հասմիկ, Արևհատ, Աստղիկ Պողոսյանների, Վաղինակ, Արևհատ, Վարդուշ, Գինուշ Պողոսյանների, Հովսեփ, Թամարա, Լալա, Լեյլի Գալոյանների, Անդրանիկ, Ելենա, Արթուր Գալոյանների (այսուհետ նաև՝



Հակընդդեմ պատասխանողներ), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ զբաղեցրած տարածքից վտարելու պահանջի մասին,



Պ Ա Ր Ձ Ե Յ

1. Գործի դատավարական նախապատմությունը

21.10.2008 թվականին դիմելով ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարան՝ Հայցվորները պահանջել են մասնակի անվավեր ճանաչել Շիրակի մարզպետարանի և «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի միջև 23.04.2002 թվականին կնքված պայմանագիրը՝ ՀՀ կառավարության որոշմամբ կապի նախարարությանը թողնված ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի թիվ 59 հասցեի 350քմ մակերեսով բնակելի շինության մասով, շենքի ամբողջ նկուղային մասը թողնելով Կապի նախարարության հաշվեկշռում որպես հետագայում լուծելի խնդիր: Կիրառելով անվավերության հետևանք, մասնակի անվավեր ճանաչել «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի Գյումրու Տիգրան Մեծ թիվ 1 հասցեով շենքի սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ կառավարության որոշմամբ Կապի նախարարությանը թողնված 350 քմ մակերեսով բնակելի շինության մասով, այդ մասի նկատմամբ դադարեցնելով արտադրական կոոպերատիվի սեփականության իրավունքը՝ շենքի նկուղային հարմն ամբողջությամբ թողնելով Կապի նախարարության հաշվեկշռում:

ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) 27.10.2008 թվականի որոշմամբ վերը նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ 14.11.2008 թվականի որոշմամբ նշանակվել է նախնական դատական նիստ:

«Պրոգրես համալսարան» ԱԿ-ն ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում ընդդեմ Ֆելիքս, Լաուրա, Ասալիկ, Գուրգեն Սարգսյանների, Գոռ, Հասմիկ, Արևհատ, ԱՄտղիկ Պողոսյանների, Վաղինակ, Արևհատ, Վարդուշ, Գինուշ Պողոսյանների, Հովսեփ, Թամարա, Լալա Լեյլի Գալոյանների, Անդրանիկ, Ելենա, Արթուր Գալոյանների, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի, որով պահանջել է Հակընդդեմ պատասխանողներին պարտավորեցնել ազատել «Պրոգրես համալսարանին» պատկանող տարածքները:

ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) 25.11.2008 թվականի որոշմամբ վերը նշված հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) 13.01.2009 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքաշինության և տրանսպորտի և կապի նախարարությունները ներգրավվել են որպես երրորդ անձինք:

Դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) 27.02.2009 թվականի որոշմամբ համաձայն ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-46-Ն ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-44-Ն ՀՀ օրենքի համաձայն սույն քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնվել է ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանին:

Դատարանի (դատավոր՝ Մ.Մարտիրոսյան) 20.03.2009 թվականի որոշմամբ վերը սույն քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:



Հայցվորներ Ֆելիքս Սարգսյանի, Գոռ Պողոսյանի, Վաղինակ Պողոսյանի, Հովսեփ Ազատի Գալոյանի, Անդրանիկ Գալոյանի կողմից 12.05.2009 թվականին միջնորդություն է ներկայացվել Դատարանին գործի վարույթը կասեցնելու մասին, նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատարանում վարույթ է ընդունվել իրենց կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ <<Պրոգրես համալսարանի>> և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության գույքի նկատմամբ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին և մինչև նշված գործով դատական ակտի կայացումը հնարավոր չէ սույն գործի քննությունը:

Դատարանի (դատավոր Մ. Մարտիրոսյան) 12.05.2009 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև կասեցումն առաջացրած հանգամանքի վերանայլը:

ՀՀ Նախագահի 23.02.2017 թվականի թիվ ՆՀ-267-Ա հրամանագրով դատավոր Մ. Մարտիրոսյանի լիազորությունները 24.02.2017 թվականից զրկվել են պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ:

Նշված գործը 05.05.2017 թվականին մակազրվել է դատավոր Լ. Հովհաննիսյանին և հանձնվել է դատավորի աշխատակազմին 06.05.2017 թվականին:

Դատարանի (դատավոր Լ. Հովհաննիսյան) 10.05.2017 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և թողնվել է կասեցված՝ մինչև կասեցումն առաջացրած հանգամանքի վերանայլը:

Հայցվորներ Գոռ Պողոսյանը, Հովսեփ Ազատի Գալոյանը, Անդրանիկ Գալոյանը 24.05.2017 թվականին Դատարան ներկայացված դիմումով հայցից հրաժարվել են խնդրել են գործի վարույթը կարճել, նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատարանում քննվող գործը ավարտվել է, վեճը վերջնականապես լուծվել է և սույն գործով հայցի և հակընդդեմ հայցի քննարկման հիմքերը վերացել են, միևնույն ժամանակ հայտնել են, որ հայցվորներ Ֆելիքս Սարգսյանը և Վաղինակ Պողոսյանը մահացել են և ներկայացրել են նրանց մահվան վկայականների պատճենները:

Դատարանի (դատավոր Լ. Հովհաննիսյան) 25.05.2017 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է և նշանակվել է նախնական դատական նիստ:

Քանի որ նախնական դատական նիստի ընթացքում իրականացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի <<Գործը դատաքննության նախապատրաստելը>> վերատուրյամբ 22<sup>2</sup>-րդ գլխով նախատեսված՝ գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում կատարվող բոլոր գործողությունները, ուստի Դատարանը 13.06.2017 թվականին առանձին ակտի տեսքով որոշում է կայացրել գործը դատաքննության նշանակելու մասին և դատաքննության որոշումը պատշաճ կերպով ուղարկել է գործին մասնակցող անձանց (ներկայացուցիչներին):

Գործի դատաքննությունն ավարտվել է 11.07.2017 թվականին և 26.07.2017 թվականին հայտարարվել է վճռի հրապարակման օր:

**2. Հայցվորների փաստարկները և իրավական դիրքորոշումը**

21.10.2008 թվականին դիմելով ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարան՝ Հայցվորները պահանջել են մասնակի անվավեր ճանաչել Շիրակի մարզպետարանի և <<Պրոգրես համալսարան>> արտադրական կոոպերատիվի միջև 23.04.2002 թվականին կնքված պայմանագիրը՝ ՀՀ կառավարության որոշմամբ կապի նախարարությանը թողնված ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի թիվ 59 հասցեի 350քմ մակերեսով բնակելի շինության մասով, շենքի ամբողջ նկուղային մասը թողնելով Կապի նախարարության հաշվեկշռում որպես



հետագայում լուծելի խնդիր: Կիրառելով անվավերության հետևանք, մասնակի անվավեր ճանաչել <<Պրոգրես համալսարան>> արտադրական կոդաբերատիվի Գյումրու Տիգրան Մեծ թիվ 1 հասցեով շենքի սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ կատարվածության որոշմամբ Կապի նախարարությանը թողնված 350 քմ մակերեսով բնակելի շինության մասով, այդ մասի նկատմամբ դադարեցնելով արտադրական կոդաբերատիվի սեփականության իրավունքը՝ շենքի նկուղային հարմն ամբողջությամբ թողնելով Կապի նախարարության հաշվեկշռում: Հայցվորներ Գոռ Պողոսյանը, Հովսեփ Ազատի Գալոյանը, Անդրանիկ Գալոյանը 24.05.2017 թվականին Դատարան ներկայացված դիմումով հայցից հրաժարվել են խնդրել են գործի վարույթը կարճել, նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատարանում քննվող գործը ավարտվել է, վեճը վերջնականապես լուծվել է և սույն գործով հայցի և հակընդդեմ հայցի քննարկման հիմքերը վերացել են, միևնույն ժամանակ հայտնել են, որ հայցվորներ Ֆելիքս Սարգսյանը և Վաղինակ Պողոսյանը մահացել են և ներկայացրել են նրանց մահվան վկայականների պատճենները: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության համաձայն՝ նախնական դատական նիստի մասին պատշաճ ծանուցված հայցվորի կամ պատասխանողի, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցների չներկայանալու դեպքում նախնական դատական նիստը կարող է անցկացվել նրանց բացակայությամբ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի (դիմողի) չներկայանալը արգելք չէ գործի քննության համար: Տվյալ դեպքում նախնական դատական նիստը և գործի դատաքննությունը կայացվել է Հայցվորների (ներկայացուցչի) բացակայությամբ՝ էլեկտրոնային նշված հոդվածների և գործն ողջամիտ ժամկետում քննելու 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներից:

### 2.1. Պատասխանողների (Հակընդդեմ Հայցվորի) փաստարկները և իրավական դիրքորոշումը

<<Պրոգրես համալսարան>> ԱԳ-ն ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում ընդդեմ Ֆելիքս, Լատիրա, Աստղիկ, Գուրգեն Սարգսյանների, Գոռ, Հասմիկ, Արևհատ, ԱՍտղիկ Պողոսյանների, Վաղինակ, Արևհատ, Վարդուշ, Գինուշ Պողոսյանների, Հովսեփ, Թամարա, Լալա Լեյլի Գալոյանների, Անդրանիկ, Ելենա, Արթուր Գալոյանների, երրորդ անձինք Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի, որով պահանջել է Հակընդդեմ պատասխանողներին պարտավորեցնել ազատել <<Պրոգրես համալսարանին>> պատկանող տարածքները: Հակընդդեմ հայցի իրավական հիմքում դրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 274-րդ հոդվածները, իսկ փաստական հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Գյումրի քաղաքի Տ. Մեծի 1 հասցեում գտնվող եռահարկ շենքը մարզպետարանի կողմից նվիրաբերվել է Համալսարանին, իսկ Համալսարանն էլ վերակառուցել է այն, որը գործում է ոչ լրիվ հզորությամբ Պատասխանողների գործողության արդյունքում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության համաձայն՝ նախնական դատական նիստի մասին պատշաճ ծանուցված հայցվորի կամ պատասխանողի, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցների չներկայանալու դեպքում նախնական դատական նիստը կարող է անցկացվել նրանց բացակայությամբ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի (դիմողի) չներկայանալը արգելք չէ գործի քննության համար: Տվյալ դեպքում նախնական դատական նիստը և գործի դատաքննությունը



կայացվել է Հայցվորների (ներկայացուցչի) բացակայությամբ՝ ելնելով վերը նշված հոդվածների և գործն ողջամիտ ժամկետում քննելու 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Մահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներից:



**2.2. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց փաստարկները և իրավական դիրքորոշումը.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել հայցվորի կամ պատասխանողի կողմում մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը, եթե գործով կայացվող վճիռը կարող է ազդել կողմերից մեկի հանդեպ նրանց ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք օգտվում են կողմի իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, բացի հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու, հայցից հրաժարվելու, հայցն ընդունելու կամ հաշտության համաձայնություն կնքելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Նրանք օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները: Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Դատարանն արձանագրում է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կարգավիճակով պայմանավորված՝ վերջինս դատավարության ընթացքում օժտված է այնպիսի իրավունքներով, որոնք ուղղակիորեն չեն ազդում գործի քննության ծավալի վրա: Մասնավորապես՝ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը չի կարող փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը և այլն: Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի իրավունքներով ու պարտականություններն անմիջականորեն չեն քննվում տվյալ գործի շրջանակներում, այլ տվյալ գործով վերջնական ակտը հետագայում կարող է ազդել երրորդ անձի և կողմերից մեկի միջև առկա իրավունքների և պարտականությունների վրա: Նման առանձնահատկությամբ էլ պայմանավորվում է ինքնուրույն պահանջ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձանց տարբերությունը: Ի տարբերություն ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի՝ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը դատավարության ընթացքում հանդես է գալիս հայցվորի կամ պատասխանողի կողմում (կախված նրանից, թե ում հետ ունեցած իրավունքներին կամ պարտականություններին է առնչվելու վերջնական դատական ակտը), դատավարությանը որպես կանոն ներգրավվում է դատարանի նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ անկախ իր կամքից: Ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը որևէ պահանջ դատարանին և կողմերին չի ներկայացնում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության համաձայն՝ նախնական դատական նիստի մասին պատշաճ ծանուցված հայցվորի կամ պատասխանողի, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցների չներկայանալու դեպքում նախնական դատական նիստը կարող է անցկացվել նրանց բացակայությամբ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի (դիմողի) չներկայանալը



արգելք չէ գործի քննության համար: Տվյալ դեպքում նախնական դատական նիստը և գործի դատաքննությունը կայացվել է երրորդ անձանց (ներկայացուցչի) բացակայությամբ՝ ելնելով վերը նշված հոդվածների և գործն ողջամիտ ժամկետում քննելու 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներից:

### 3. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1) 17.04.1981 թվականին Լենինականի քաղաքային սովետի գործկոմի կողմից տրված օրդերների համաձայն՝ Լենինի հրապարակ, փողոց 1-ում համապատասխան բնակ. տարածքը զբաղեցնելու համար:

2) 18.01.1999 թվականի ակտի համաձայն՝ Գյումրու կապի հանգույցի շենքը 2050քմ մակերեսով ընդունվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի հաշվեկշիռ:

3) 23.04.2003 թվականի անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրի համաձայն՝ Գյումրու Ս. Մեծի թիվ 1 հասցեով նախկին փոստատան 3-րդ աստիճանի վթարային, եռահարկ շենքը նվիրաբերվել է «Պրոգրես» համալսարան ԱԿ-ին:

4) 15.04.2002 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 519202 վկայականի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Մեծի 1 շենք հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքը (ծածկագիր՝ թիվ 08.001)՝ 10.01.2001 թվականի ՀՀ կառավարության թիվ 15 որոշման հիման վրա:

5) 02.05.2002 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 519310 վկայականի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Մեծի 1 շենք հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է «Պրոգրես» համալսարան ԱԿ-ի սեփականության իրավունքը (ծածկագիր՝ թիվ 08.001)՝ 23.04.2002 թվականի անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրի հիման վրա:

6) Դատարանի (դատավոր՝ Մ. Մարտիրոսյան) 12.05.2009 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ5/0546/05/09 վարչական գործով վերջնական որոշում կայացնելը:

7) Հայցվորներ Գոռ Պողոսյանը, Հովսեփ Ազատի Գալոյանը, Անդրանիկ Գալոյանը 24.05.2017 թվականին Դատարան ներկայացված դիմումով հայցից հրաժարվել են խնդրել են գործի վարույթը կարճել, նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատարանում քննվող գործը ավարտվել է, վեճը վերջնականապես լուծվել է և սույն գործով հայցի և հակընդդեմ հայցի քննարկման հիմքերը վերացել են:

### 3.1. Ապացուցում պահանջող փաստերի շրջանակը (ապացուցման առարկան) և կողմերի միջև ապացուցման պարտականության բաշխումը.

Սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը (ապացուցման առարկան), որոնք պետք է ապացուցվեն գործին մասնակցող տվյալ սուբյեկտի կողմից, հետևյալ փաստերն են.

ա) արդյոք չակընդդեմ Հայցվորը հանդիսանում է սույն վեճի առարկա անշարժ գույքի սեփականատերը կամ օրինական տիրապետողը (այս փաստի ապացուցման բեռը կրում է Հայցվոր կողմը):

բ) արդյոք չակընդդեմ Հայցով Պատասխանողները սույն վեճի առարկա անշարժ գույքը տիրապետում են ապօրինի (այս փաստի ապացուցման բեռը կրում է Հայցվոր կողմը):



**4. Դատարանի իրավական վերլուծությունները**

Դատարանը, ուսումնասիրելով ներկայացված ապացույցները և գործի հանգամանքները, միաժամանակ քննարկելով Հայցվորների՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու վերաբերյալ ներկայացրած դիմումը, գտնում է, որ այն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի պահանջներից և ենթակա է բավարարման, քանի որ Հայցվորներն իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնում են իրենց հայեցողությամբ և իրավունք ունեն առաջին ատյանի դատարանում հրաժարվել հայցից մինչև դատաքննության ավարտը, և ըստ այդմ՝ քաղաքացիական գործի վարույթը սկզբնական հայցապահանջի մասով ենթակա է կարճման, իսկ հակընդդեմ հայցը անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

I. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ի կետի համաձայն՝ հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի <<Գործի վարույթի կարճման հիմքերը>> վերտառությամբ 109-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը, ի թիվս այլ դեպքերի, կարճում է գալծի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

ՀՀ քաղաքացիական դատավարությունում գործում է տնօրինչականության սկզբունքը, համաձայն որի՝ գործին մասնակցող անձն օրենքով սահմանված կարգով սեփական հայեցողությամբ է տնօրինում իր նյութական և դատավարական իրավունքները և որոշում իր իրավունքների պաշտպանության միջոցներն ու եղանակները: Մասնավորապես՝ դատական վեճի տնօրինման սկզբունքի հիման վրա կողմերը որոշում են վեճի հետագա ընթացքն ու լուծման ճանապարհները: Դրան համապատասխան էլ դատարաններն իրականացնում են արդարադատություն՝ հարուցում են քաղաքացիական գործ, քննում և լուծում այն, ինչպես նաև քննում և լուծում են դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները: Ընդ որում, ինչպես գործին մասնակցող անձինք, այնպես էլ դատարանները պարտավոր են պահպանել օրենքով սահմանված կարգը:

Քաղաքացիական գործով դատաքննությունը, որպես կանոն, ավարտվում է վճռի կայացմամբ, որն ըստ էության լուծում է կողմերի միջև ծագած վեճը: Օրենքով նախատեսված առանձին դեպքերում դատարանը կարող է ավարտել քաղաքացիական գործի քննությունն առանց վեճի ըստ էության լուծման կամ վճռի կայացման:

ՀՀ վճռաբեկ դատարանն նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ հայցից հրաժարումը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարումն է: Հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով: Դատարանը չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատճառների գնահատմանը, սակայն պարտավոր է հայցվորին պարզաբանել կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվել, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից (տե՛ս, Յուրիկ և Ադունիկ Փիլոյաններն ընդդեմ Սիրանուշ Փիլոյանի թիվ ԵԿԴ/0462/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.10.2012 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն



հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում:

Տվյալ դեպքում Հայցվորներ Գոռ Պողոսյանը, Հովսեփ Ազատի Գալոյանը, Անդրանիկ Գալոյանը 24.05.2017 թվականին և Ֆելիքս Մարգարյանի իրավահաջորդ Լուրա Մարգարյանը, Վաղինակ Պալոսյանի իրավահաջորդ Արևհատ Պողոսյանը Դատարան ներկայացված դիմումով հայցից հրաժարվել են և խնդրել են գործի վարույթը կարճել նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատարանում քննվող գործը ավարտվել է, վեճը վերջնականապես լուծվել է և սույն գործով հայցի և հակընդդեմ հայցի քննարկման հիմքերը վերացել են:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանն արձանագրում է, որ Հայցվորներն, Պատասխանողներին ուղղված նյութաիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարվել է, որպիսի պարագայում սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման՝ Հայցվորների կողմից հայցից հրաժարվելու հիմքով:

Տվյալ պարագայում Հայցվորները հայցից հրաժարվել են նախնական դատական նիստում (նախապատրաստական փուլում), ուստի Դատարանն արձանագրում է, որ հետագայում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ թույլատրվում է կրկին դիմել Դատարան՝ ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ կետի պահանջներից և իրավական որոշակիության սկզբունքից:

II. 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը (...):

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը (...):

Համանման բովանդակությամբ իրավադրոյթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասով, 60-րդ հոդվածի 1-ին մասով:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

Այս առումով Դատարանն անհրաժեշտ է համարում մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Այսպես, ըստ ՄԻԵԴ-ի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*տե՛ս, The Former King of Greece and others v. Greece գործով ՄԻԵԴ*



23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ): Հետևաբար առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (տե՛ս, *James and Others v. The United Kingdom* գործով ՄԻԵԴ-ի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (տե՛ս, *James and Others v. The United Kingdom* գործով ՄԻԵԴ-ի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ):

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (տե՛ս, *Sporrong and Lönnroth v. Sweden* գործով ՄԻԵԴ-ի 23.09.1982 թվականի վճիռը, 69-րդ կետ): Մասնավորապես, գույքից անարգել օգտվելու իրավունքի ցանկացած միջամտության դեպքում կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է գոյություն ունենա համաչափության որոշակի ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս, *Scollo v. Italy* գործով ՄԻԵԴ-ի 28.09.1995 թվականի վճիռը, 32-րդ կետ): ՄԻԵԴ-ի գնահատմամբ նման բարենպաստ հավասարակշռության հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի միջամտության նպատակով սեփականատերն ստիպված է կրել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն (տե՛ս, *The Former King of Greece and others v. Greece* գործով ՄԻԵԴ-ի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավարվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով: Տնօրինման իրավագործությունը սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու միջոցով, գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու իրավունքն է: Այս իրավագործությունն է, որ սեփականատիրոջը հնարավորություն է տալիս իր գույքը վաճառել, նվիրել, գրավ դնել և այլն: Եթե սեփականատերը ոչնչացնում կամ դեն է նետում իր գույքը, ապա տնօրինման իրավունքն իրականացնում է գույքի փաստացի ճակատագիրն այդ եղանակներով որոշելու միջոցով: Տնօրինման իրավունքի իրականացում չի կարող համարվել օգտագործման միջոցով գույքի



գոյության դադարումը, որովհետև գույքը սպառելիս սեփականատիրոջ նպատակը ոչ թե սեփականության իրավունքը դադարեցնելն է, այլ գույքի օգտակար հատկություններից բավարարում ստանալը:

Նշված դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ սեփականատիրոջ իրավագործությունների (տիրապետում, օգտագործում, տնօրինում) ամբողջությունը կազմում է սեփականության իրավունքի բովանդակությունը, և դրանց ամբողջությունն օրենքով պատկանում է սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտի իրավունքի կրողի, և սահմանում սեփականության իրավունքի իրականացման սահմանները, ինչն ապահովում է գույքի նկատմամբ սեփականատիրոջ լիակատար գերիշխանությունը՝ սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից (վիճակակցիոն հայց):

Վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: Տիրապետումն ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի (*տես՝ Արմենուհի Թադևոսյանն ընդդեմ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի թիվ ՇԴ/0613/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը*): Ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիտղոսային տիրապետումը, այլև երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիտղոս) վրա, որը հետագայում վերանում է:

Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքը ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են: Հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը:

Նշված փաստի ապացուցման դատավարական բեռի բաշխման առումով ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունը, գտել է, որ ապօրինի տիրապետողի կողմից գույքը հետ վերադարձված լինելու փաստի ապացուցման դատավարական բեռը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի ուժով կրում է նման փաստարկ ներկայացրած կողմը (*տես՝ ըստ հայցի Միսակ-Նուբար Թերեղեկյանի ընդդեմ Ռուբեն Քոչարի և այլոց թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում արտահայտած դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի իրավունքը նյութական և դատավարական իրավունքների ինստիտուտ է: Հայցի իրավունքի դատավարական կողմը ենթադրում է դատարան դիմելու իրավունքը, իսկ նյութաիրավական կողմը՝ օրինական և հիմնավորված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունքը:

Յուրաքանչյուր դեպքում հայցվորի պատշաճ լինելու հարցը լուծելիս դատարանները պետք է պարզեն հայցի իրավունքի նյութաիրավական կողմի առկայությունը, մասնավորապես՝ արդյոք հայցվորը հանդիսանում է վիճելի իրավահարաբերության մասնակից, և արդյոք վիճելի իրավունքը պատկանում է վերջինիս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցերով պատշաճ հայցվոր հանդիսանում է գույքի սեփականատերը:



Միննույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածը սահմանում է, որ նույն օրենսգրքի 274-րդ հոդվածով նախատեսված իրավունքը պատկանում է նաև այն անձին, ով թեև սեփականատեր չէ, սակայն գույքը տիրապետում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքով:

Վերոգրյալից հետևում է, որ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետո պահանջելու հայցերով պատշաճ հայցվոր կարող է լինել նաև գույքն օրենքով կամ պայմանագրով տիրապետող, սեփականատեր չհանդիսացող անձը:

Վինդիկացիոն հայցը կարող է հարուցվել միայն ապօրինի տիրապետողի դեմ, հետևաբար այդպիսի հայցով պատշաճ սլուստասխանող կարող է լինել այն անձը, ում ապօրինի տիրապետման ներքո գտնվում է սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի գույքը (տե՛ս, *Վարդան Ղազարյանն ընդդեմ Լևոն Գրիգորյանի թիվ ԼՂ1/0030/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի իրավական վերլուծությանը, նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ կլնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (տե՛ս, *Էդգար Մարկոսյանն և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (տե՛ս, *Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ*



Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս, Ռազմիկ Մարությանն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 17.04.1981 թվականին Լենինականի քաղաքային սովետի գործկոմի կողմից տրված օրդերների համաձայն՝ Լենինի հրապարակ, փողոց 1-ում համապատասխան բնակ. տարածքը զբաղեցնելու համար: 18.01.1999 թվականի ակտի համաձայն՝ Գյումրու կապի հանգույցի շենքը 2050քմ մակերեսով ընդունվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի հաշվեկշիռ: 23.04.2003 թվականի անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրի համաձայն՝ Գյումրու Ս. Մեծի թիվ 1 հասցեով նախկին փոստատան 3-րդ աստիճանի վթարային, եռահարկ շենքը նվիրաբերվել է <<Պրոգրես>> համալսարան ԱԿ-ին: 15.04.2002 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 519202 վկայականի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Մեծի 1 շենք հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքը (ծածկագիր՝ թիվ 08.001)՝ 10.01.2001 թվականի ՀՀ կառավարության թիվ 15 որոշման հիման վրա: 02.05.2002 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 519310 վկայականի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Մեծի 1 շենք հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է <<Պրոգրես>> համալսարան ԱԿ-ի սեփականության իրավունքը (ծածկագիր՝ թիվ 08.001)՝ 23.04.2002 թվականի անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրի հիման վրա: Դատարանի (դատավոր՝ Մ. Մարտիրոսյան) 12.05.2009 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ5/0546/05/09 վարչական գործով վերջնական որոշում կայացնելը: Հայցվորներ Գոռ Պողոսյանը, Հովսեփ Ազատի Գալոյանը, Անդրանիկ Գալոյանը 24.05.2017 թվականին Դատարան ներկայացված դիմումով հայցից հրաժարվել են խնդրել են գործի վարույթը կարճել, նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատարանում քննվող գործը ավարտվել է, վեճը վերջնականապես լուծվել է և սույն գործով հայցի և հակընդդեմ հայցի քննարկման հիմքերը վերացել են:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Դատարանն արձանագրում է, որ սույն վճռի 3.1-րդ կետում նշված գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերից (ապացուցման առարկան) Հայցվորի կողմից չի ապացուցվել նույն կետի <<ա>> և <<բ>> ենթակետերով սահմանված փաստերը, մասնավորապես՝ Հայցվորը հանդիսանում է սույն վեճի առարկա անշարժ գույքի սեփականատերը և Պատասխանողները սույն վեճի առարկա անշարժ գույքը տիրապետում են ապօրինի, ուստի հակընդդեմ հայցն ենթակա է մերժման:

*Պետական տուրքի լուծման հարցը.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները



դրանց գտնվելու վայրում գնելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի <<ա>> կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար:

<<Պետական տուրքի>> մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Նույն օրենքի 9 հոդվածի 1-ին մասի <<ա>> կետով սահմանված կարգով ներկայացված պահանջով հայցադիմումի համար պետական տուրքը կազմում է՝ գույքային պահանջով՝ հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից, իսկ նույն հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով սահմանված կարգով ներկայացված պահանջով հայցադիմումի համար պետական տուրքը կազմում է՝ ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

Տվյալ պարագայում Հայցվորների և Հակընդդեմ Հայցվորի կողմից վճարվել է <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով իրենց կողմից ներկայացված ոչ գույքային պահանջների համար սահմանված պետական տուրքի գումար, իսկ հակընդդեմ հայցապահանջը մերժվել է, իսկ սկզբնական մասով գործի վարույթը կարճվել է, ուստի Դատարանը, ելնելով բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքից, գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, 68-րդ, 73-րդ, 109-րդ հոդվածի 6-րդ կետով, 124-րդ, 130-րդ, 130<sup>1</sup>-133-րդ, 140-140<sup>1</sup>-րդ հոդվածներով՝ Դատարանը

### Վ Ճ Ռ Ե Ց

1. Թիվ ՀՅԲԴ1/0081/02/08 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի՝ Ֆելիքս Սարգսյանի իրավահաջորդ Լաուրա Սարգսյանի, Գոռ Պողոսյանի, Վաղինակ Պողոսյանի իրավահաջորդ Արևհատ Պողոսյանի, Հովսեփ Ազատի Գալոյանի, Անդրանիկ Գալոյանի ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի, <<Պրոգրես>> համալսարանի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի Գյումրու տարածքային ստորաբաժանման, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասի, կարճել՝ Հայցվորների կողմից հայցից հրաժարվելու հիմքով, իսկ ըստ հակընդդեմ հայցի՝ <<Պրոգրես համալսարան>> ԱԿ-ի ընդդեմ Ֆելիքս, Լաուրա, Աստղիկ, Գուրգեն Սարգսյանների, Գոռ, Հասմիկ, Արևհատ, Աստղիկ Պողոսյանների, Վաղինակ, Արևհատ, Վարդուշ, Գինուշ Պողոսյանների, Հովսեփ, Թամարա, Լալա, Լեյլի Գալոյանների, Անդրանիկ, Ելենա, Արթուր Գալոյանների, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն



պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի զբաղեցրած տարածքից վտարելու պահանջի մասին, մերժել:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաբնիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ



Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Առջե Կոնտր Երևոյ 5 օրինակաւ ռաժի Մեջ 28.08.2017թ.*

*Պատրաստար*



*Լ. Կամրանեմբայան*